28. ԽՈՒԹԲԻ ԹԱԳԱՎՈՐ

Կէղնի, չէղնի թագավորըմ կէղնի, անուն Խութբի թագավոր կէղնի։

Էդ Խութբի թագավորին հեչ զուռյաթ չէղնի, ինք լէ անհրսաա ուժով կէղնի ու խելքի տեր։

Էդ Խութբի թագավորին հալվորըմ կեր, դրեր էր ուր պապու տեխ, ինչ օր հրրաման էներ էդ հալվոր, Խութբի թագավոր էնդոր խոսքից չըր հ'էլներ. ասեր՝ մեռի, մեռի, ապրի, ապրի։ Աման Խութբի թագավոր զուր խելք էդ հալվորուց էր վերցի, հալվոր մ'ասի՝ Սողոմոն Հ'իմաստուն։

Հ'իրկումմ' էր Խութբի թագավորն դավաթ էր էրի զուր բեդաբեդ մարդիկ, նստուկ են կժըղլեն։

Բեդաբեդ մարդիկ վերցին ասին.—Թագավո՛ր ապրած, քու վախտ էկավ կընցնի, զուռյաթըմ չէղավ քղիկ, էկո կարգվի, քղիկ ուրիշ կնիկըմ ըի վըր էդա կնկան, բալքիմ հետև քու հ'ընցման զուռյաթըմ էղնի, նստի վըր թագավորական թախտին, քու տեխ։

Խութբի թագավորն կասե.—Դուք գինաք, մըր օրենքի մեջ էրկու կնիկ առնել յասախ է, անկարելի է։ Հեղըմ օր իմ գլուխ իմ հ'առջի կնկան գլխուն դրվեր է, էլ ուրիշ կնկա գլխու չդրվի։

Մաժլիսն կվերու կասե.—Ջը՛ս կարգվի, իմա՞լ կէնիս, կուզիս զմըր թագավորութենի սըլսըլեն կտրի՞ս։

Խութբի թագավորն կասե.—Սըլսըլեն չէ, թագավորութեն լէ էրթա, լը՛մ կարգվի։

Հալվոր նստուկ է, կմտածե, ձեն չհանե։

Մաճլիսներեն մեկն էնդիեն կթոնի էդ հալվորուն կասե.—Աբո՛, դու հ՚որի՞ն չըս խոսա, ի՞նչ կասիս, մենք գեշ կասինք, աղեկ կասինք, բանըմ լէ դու ասե, քանի օր մըր թագավոր ղբղիկ ուր հոր տեխն է դրի, բալքիմ քղիկ անկաջ էնե։

Հալվորն կասե.—Ես ի՞նչ ասիմ, ես գինամ օր էնդոր սրտի մեջ մարամըմ կա, հ՚եբ օր էնի կատարվավ, նոր կկարգվի, էդ մարամի հ՚ապով է,—կասե,—ուխտ իմ էրի։

Դարցան թագավորից հարցուցին, ասին.—Ի՞նչ կասիս հալվորու ասածին, ի՞նչ է քու սրտի մարամ, մզիկ լէ ասե։

Թագավորն ասեց.—Հալբա՛թ բանըմ լէ իմ սրտի մեջ կան, օր կասիմ չըմ կարգվի, թը չէ՝ մարդ զուր աչք քո՞ռ կուզե, ես կուզիմ օր անղուդյաթ մեռնեմ, չէղած բան է։

Ասին.—Ինչ կէղնի, մենք լէ քումն ինք, մըր տուն-տեխ, ունեցած-չունեցած քու օղուրին ինք դրի։ Ասե, տեսնանք ի՞նչ է քու սրտի մարամ, բալքիմ մենք հաջողցունք։

Թագավորն ասեց.—Բան չըմ ասի, բըլե վախենամ պարապ թալաֆաթ իտաք, ու զիմ սրտի մարամ չկառնաք տեխ բերիք։

Ասին.—Ջանը՛մ, դու լէ ասե։

Ասեց.—Ես կուզիմ ձինե, էրթաք Տիարբաքրու քաղաք, ախչիկըմ կա, առնիք հ՚իգաք՝ մեկ։ Ջէնի օր բերիք, Հալպու քաղաք ձի մը կա, ըստհաղ ղէնի էրթաք բերիք՝ էրկուս։ Ջէն լէ բերեք խըլըսաք, Հընդու Ցամանու քաղաք տղեմ՚ կա, էրթաք զէն լէ բերիք՝ իրեք։ Բըլե էդոնք հ՚ըմեն մեկ օրով չէղնին, յավաշ-յավաշ, բայց մեկ լէ իմ խելք չկտրե, դուք կըռնաք էրթաք զիմ հ՚ուզածներ առնիք հ՚իգաք։

Էդոնք ասին.—Ջանը՛մ, մենք ահագին հ՚երկրացիմ ինք, իմա՞ղ զքու հ՚ուզածն չընք կառնա բերի, զմըզիկ կիտանք թալաֆաթ էնիլ ու զքու խոսք տեխ կբերինք։

Հ՚էլան գացին, ուրանց առանձին ժողովք էրին, Ասո անունով տղեմ՚ կեր ուրանց մեջ, խելք էն տղից մինակ կկտրեր, որոշեցին օր էրթա զէդ Տիարբաքրու քաղքի ախչիկն առնե ու հ՚իգա։

Էկան թագավորին ասին.—Թագավո՛րն ապրած, մենք որոշեցինք տղեմ՚ օր էրթա զքու ասած ախչիկն առնե ու հ՚իգա։

Թագավորն ասեց.—Շա՜տ աղեկ, բան չըմ ասի, զէդ տղեն ճամբեք հ՚իգա, իշքիմ, սորա թըղ էրթա։

Լուսցավ, Խութբի թագավորն հ՚իշավ մըշ խաս բաղչուն, թալեց զուր սանտալիեն, դրեց զուր նարկիլեն ու կքաշեր, հ՚երկրացին լէ քոմուկ էր բոլոր ջախաշենլրկ կէներ։

Թալալ տվեց կանչել, ինչ խրդար օրձեզեն մարդ կա, թագավորի ամրն է, օր զիրար քոմին հ՚իգան, խաս բաղչեն։

Ինչքան օրձեզեն օր կեր էդ քաղքի մեջ, քոման էկան, վիրն օր ուր աչք կկտրեր, ջոկեց մեկդին։ Էն որ աչք չկտրեր, ասեց.—Դուք գացեք, պետք չըք իգա։

Ասեց.—Էդա տղեն օր բերեր իք, էդոր բերնեն չընկեր է էրթա, զէդ ախչիկ բերե, մեկ լէ էրթացող ես իմ, չէրթացող ես իմ,—ասեց ու բռնեց զէդ մարդոց ձեռքեր գեոյա բարեմնաց կէղներ, վիր ձեռք օր բռնեց ճըխտեց, արուն մատներու ծերուց թալեց, էկավ տղեմ՚ վրեն օր զձեռք տվեց տղի ձեռք, տղեն ճըխտեց, խութբի թագավոր վրժաց։

Ասեց.—Ես չգինեք օր խութբուց զորավոր խութբի լէ կա, հըմկա ձըր միչեն խելքս օր կկտրե, զէդ ախչիկ բերողն էղնի էդա տղեն է, չէղնի էդա տղեն է։

Առավ ու գնաց ուր դիվան։

Ասեց.—Տղա՜, հ՚ուզե իտամ։

Տղեն ասեց.—Ես բան չըմ հ՚ուզի, զքու Քիշնար ձին ու թուր տուր, էրթամ զքու հ՚ուզած ախչիկն առնիմ, հ՚իգամ։

— Լաո՜,—ասեց,—զՔիշնար ձին տվի, դու հեծար գացիր ու ըռնվար, ես ի՞նչ ձի հեծնիմ հ՚իգամ զքզիկ ազատեմ, հիչ օլմազ իսա։ Զթուր կիտամ՝ բան չըմ ասի, ուրիշ ձիմ՚ քզիկ հ՚ընտրե, իմ ձիանք հ՚ըմեն լէ գահել ին. մտի ախոռ, քու սրտով հատըմ ջոկե, հեծի ու գնա։

Տղեն իշավ թավլեն, օլըրտավ, էդա խրդար ձիու մեջ կղտոտ, ջաղոտ ձինըմ կեր, քաշեց դուրս, ասեց. «Ես զէդա ձին կհեծնիմ»։

Թափան հ՚ընկերտանք էկան, ասին.—Տղա՜ լաո, էդա խրդար աղեկ ձի կա էդ տեխ, մարդավարի ձիմ՚ քաջե հեծի գնա, իսկի չէ՝ կռվու մեջ կընկնիս, զքզիկ կազատե, էդա ձիու վրեն կռվու մեջ հ՚ընկար՝ չըս կառնա ազատի։

Ասեց.—Ջանը՜մ, դուք ի՞նչ կասեք, ամեկ մարդ զուր գործ ուր քեֆով կէնե, դուք օր գացիք, դուք զաղեկ ձին ջոկեք։

Գացին թագավորին ասին.—Դու լէ մարդ գտար ու գործ դրիր, եկո տես իմա՞լ ձիմ՝ է ջոկի, օր հար քաղքեն դուրս հ՚էլնի, կմնա. կասինք էդա խըդար ձի կա էդ տեխ, աղեկ ձի մը ջոկե հեծի, անկաջ չէնե։

Թագավորն էկավ տեսավ, ասեց.—Էդա ձի՞ն է գեշ, էդի Քիշնար ձիու ջընսեն է, Քիշնար ձիու քուրոջ տղեն է, նոր դիցա օր էդ տղեն զիմ հ՚ուզած ախչիկ կրերե։

Պագեց ղթագավորի ձեռք, բարեմնաց էղավ էդ տեխ էղողնեբուց, քաշեց զուր ձին դուրս ու հեծավ։ Կանչեց զուր աստվածն ու հ՚ընկավ ճամփախ։ Շատ գնաց, քիչ գնաց, հ՚ըռաստ էկավ քոշկ ու սարայում, զարկեց զդարկյահն, մտավ էդ սարայուց ներս։ Մտավ ներս, տեսավ օր հալվորըմ նստուկ էդ տեխ, դրեր է զխայլոն հ՚առեջ ու կքաշե, խեչ լէ յոթ-ութ տարեկան էրեխեմ՚ կեր, կէրթեր հ՚առեջ ու կիգեր։

— Բարև քի, Աբո՛։

— Վո՛ւ, ասսո՛ւ բարին, կտրիճ մանուկ։

— Աբո՛,—ասեց տղեն,—տեխ ունի՞ս, հ՚էսօր զիս ու զիմ ձին խոնախ էնիս, կուզիս մեկի տեխ էրկուս առ։

Հալվորն ասեց.—Աղե՛կ տղա, կտրի՛ճ մանուկ, ես փարով տեխ չունիմ, ամեն օր առանց փարի էղնի, տեխ՝ ջատ։

Տղեն ասեց.—Մադամ օր էդի զէդ մարդկութեն կէնե, ես լէ իսան իմ, լուսուն օր հ՚էլա, օսկիմ՚ կհանիմ, դնիմ տղի ձեռք, կթողիմ կէրթամ։

Հ՚իջավ ձիուց, զձին քաշեց ներս, կապեց։ Հ՚ալվորն է, վազեց կալ, բերեց զխոտ, զհ՚երդն ու զգարին լցեց ձիու հ՚առեջ, էրեց քելխ։ Էկավ առավ զտղեն ու հ՚էլավ վերին դին, խուդնի յորղան փռեց, դրեց զտղեն վրեն, վազեց վըր ճազվին, զխահվեն եռցուց, բերեց դրեց տղի հ՚առեջ, իքրամ, ազատին խըսուր չթողեց։

Քնելու գահ օր էղավ, զտղի տեխ թալեց մեկ սադրին, զուր լէ՝ մեկ սադրին։ Կանչին զուրանց աստվածն ու պառկան քնան։

Պառկան քնան, կես գիշեր էղավ, էրազ՚ էկավ հալվորուն, հալվոր դու իմա՞լ մըսաֆըր կպահիս օր հ՚իրկըվնե էդ տղեն էկեր է հ՚իջի քու տուն, չըս հարցու. «Տղա, դու հ՚ուստե՞ն կիգաս, հ՚ո՞ւր կէրթաս»։

Իրեք անգամ քնավ, իրեք անգամ էլ հեջրցուցին, զէդ էրազ տեսավ։ Հ՚իմցավ, տեսավ օր քնելով չէղնի, հ՚էլավ նստավ։

13—276

Ասեց.—Աղեկ տղա, կտրիճ մանուկ հ'իմաց ի՞ս։

Տղեն ասեց.—Հ'իմաց իմ, ի՞նչ է։

— Տղա՛ լաո, հ'իրկուն մենք նստանք էդ խդար հ'իրարու հետ ժղլանք, կերանք, խմեցինք, ես քինե չհարցուցի, թե հ'ո՞ւստեն կիգաս, հ'ո՞ւր կէրթաս, ընծիկ էղեր է մարախ, չթողե քնիմ։

Տղեն ասեց.—Արո՛, քինե պահիմ, աստծուց ի՞նչ պահիմ, ես ֆըլան հ'էրկրի խութբի թագավորի մարդոց մոտեն իմ, էկեր իմ կէրթամ, Տիարբաքրու քաղքի ախչիկն առնիմ հ'իգամ խութբի թագավորին։

Հ'ալվորն ասեց.—Լաո՛, դու մենակ իմա՞լ կառնաս, էրթաս քաղքիցըմ խըլիս ախչիկըմ առնիս հ'իգաս։

Տղեն ասեց.—Ես իմա՞լ էնիմ, հըմալ էղավ։

Հ'ալվորն բանըմ չհասկցավ, զգլուխ թալեց, պառկավ քնավ։ Մեկ լէ սպիտակ հալվրներով մարդըմ կանավ վըր գլխուն, ճամբեմ ցուցու էդ մարդուն. «Զգլուխդ մ'թալի քնի»։

Հալվորն մեկ լէ հեչրցավ, հէլավ նստավ, առավ զխալամն ձեռք, թուղթըմ, գրեց ուր քուրոջ։

Էդ հալվորու քուր լէ Տիարրաքրու քաղաքն էր դատուկ, ախչիկ լէ էդ աղչկա հ'առեջ խըզմաթ կէներ։

Ասեց.—Կտանես, օր քաղաք կմտնես, ձախ դիու տարաֆ փողոցըմ կա. հ'ոնի կմնան, կհարցուս՝ Ջանկերի տուն ո՞րն է, կըցուցուն։ Կէրթաս կիջնիս, զթուղթ կիտաս, կասիս. «Զիս քու ախպերն է ճամբի, էկի»։ Էնի օր զէդ ախչիկ չբերե իտա քու ձեռք, առնիս հ'իգաս, դու չըս կառնա բերի։

Տվեց զթուղթ, տղեն հ'էլավ լուսուն բարեմնաց էղավ, հանեց էրկու օսկի լէ, էդ պզտիկ տղի ձեռք ճըխտեց, հեծավ զուր ձին, բարեմնաց էղավ ու հ'ընկավ ճամբախ, գնաց։ Շատ գնաց, քիչ գնաց, մինակ աստված գինա, գնաց Տիարբաքրու քաղաք հ'էլավ դուրս։

Դարկեց օր մտավ ներս, ձախ դիու փողոց բռնեց ու գնաց, գնաց հարցուց. Ջանկերի տուն ի՞նչ դին է։

Ցուցուցին, ասին ֆըլան տեխն է, գնաց հ'իջավ։

Էկավ Ջանկեր, բարև տվին հ'իրարու ու նստան։ Նստան հար հ'իրկուն ժըղլան, ախչիկն էկավ, օր էկավ, մեր հանեց զթուղթ, տվեց ախչկա ձեռք։

Ասեց.—Տե՛ս քու քեռին ի՞նչ է գրի, հ'իս թախաթ չկա, մնաց մարիֆաթ քզիկ օր ճամբեմ հանիս։

Ախչիկն ասեց.—Ես լէ կաշխատիմ, տեսնանք հ'էլնիմ լուսուն, էրթամ տեսնամ ի՞նչ էնիմ։

Նախսա, պառկան քնան, հ'էլան, լուսուն ախչիկ գնաց։ Գնաց, խանում դրռ նոր կէլներ քնուց, բռնեց զհալավ հագավ, յաթախ ծալեց դրեց ուքլուկ, շուր լըցեց, ձեռք լվաց, էկավ նստավ, ֆըքրավ ախչկա վրեն, տեսավ օր սարսարի-սարսարի կուշտ ու բոլոր կիշքե։

Ասեց.—Ախչի՛, հ'էսօր բանըմ էդե՞ր է քզիկ, օր կուշտդ ու բոլորդ կիշքիս։

Ախչիկն ասեց.—Խանո՛ւմ, քինե պահիմ, աստծուց ի՞նչ պահիմ, խութբի թագավոր մեկըմ ճամփեր է էկի օր զքի տանե։

Կասե՝ զորով լէ էդնի կտանիմ, խաթրով լէ էղնի՝ կտանիմ, էլ իմալ գինա, հրմալ թըղ էնե։

Խաթունն ասեց.—Ջաթի ես խութբի թագավորի մարախլին իմ, օր կասեն ավլատ թավլատ չունի, կուզիմ առնե զիս, տղեմ՝ էղնի ընծիկ, հ'ետև ուր հ'ընցման նստի վըր թախտին, բըլե չըմ գինա իմա՞լ կտանե զիս, օր հոտ դուրս չէլնի։ Կառնա՞ս դու հ'իրկուն փաթիս շալ առնիս զէդ մարդ, հ'իգաս, հ'իրարու հետ տեսնվինք։

Ախչիկն ասեց.—Շատ աղեկ, թըղ էղնի։

Հ'իրկուն օր էղավ, բերեց զտղեն պըլուվեց շալն ու առավ էկավ ախչկա մոտ։

Բարև տվին հ'իրարու, առան զբարև։

Ախչիկն ասեց.—Տղա՛, դու ի՞նչ մարդ իս։

Ասեց.—Ես խութբի թագավորի մշակն իմ, էկեր իմ օր զքզիկ առնիմ էրթամ, էդա լէ ուր թուրն է, անուն վրեն գրուկ է։

Ախչիկն ասեց.—Շատ աղեկ, բան չըմ ասի, գիկամ բըլե դու իմա՞լ կխըլըսցուս զիս տանիս։

— Իմ խըլըսցնելն,—ասեց տղեն,—քու վրեն է, զճամբախ դու պետք է հանիս։

Ախչիկն ասեց.—Վաղ ես կէրթամ բաղնիք, թամբիհ կէնիմ օր օրձեզեն մարդ չէլնի դուրս, էկո առ զիս ու գնա։

Աֆանդըմ, էդոնք կերան, խմեցին, տղեն հ'էլավ հ'իրկուն թորկեց էկավ տուն, պառկավ քնավ, օր լուսուն հ'էլնի էրթա առնե զախչիկն ու հ'իգա։

Ախչիկն լուսուն շուտ հ'էլավ, թալալ տվեց կանչել, օր օրձեզեն մարդ չէլնի դուրս, հ'էլավ գնաց բաղնեք, լողկցավ ու հ'էլավ կանավ դուռ, տղին իշքեց։ Տղեն է, իմալ օր զգլուխ թալեր էր

հ՝իրկուն ու պառկի քնի, հմալ քնուկ էր, ձիուն լէ չըր հ՝էլի իշքի, ձին քըրրուց զխուշքին փորեր էր, հարի չոքեր հ՝իշեր էր խուշքու մեջ։

Գեժդան գեժ հեշրցավ, տեսավ օր վախտ հ՝ընցեր է, շուտըմ զուր հալվըներ թալեց ուր փեճ ու վազեց գնաց, թավլեն օր ձիուն իշքեր, տեսավ օր ձին չոքըմ փորեր է զուր տակ ու հ՝իշեր է խուշքու մեջ, ասեց. «Վալա՜յի, փորձանքըմ կա հ՝առեջս»։

Քաշեց զձին հանեց դուրս, զտակ ավլեց, հ՝էլավ ու հեծավ, քշեց էկավ տեսավ, օր ախչիկ հանդ է բաղնքի դուռ կանուկ։

Ասեց.—Տնավե՜ր, քզիկ ի՞նչ էղավ։

Տղեն ասեց.—Խաթո՜ն, քու ձեռք կպագնիմ, ա՜ֆ ընիս ընծիկ, հ՝անգան քներ իմ, քներ իմ ու մանցի։ Էկո՜ թարկիս։

Առավ թարկին ու զուր ձին քշեց, հ՝էլավ բաղներուց դուրս։

Օլրավ, մեկ հ՝ետևանց իշքեց, ա՜խ, ա՜խըմ քաշեց։

Ախչիկն ասեց.—Հ՝որի՞ ա՜խ, ա՜խ քաշիր։

Ասեց.—Ա՜խ, ա՜խ կքաշիմ օր ախչիկըմ էկա տարա, մեկիմ հետ կռիվ չէրի, վաղ պիտի ասին, փախցնելով առավ գնաց։

Ախչիկն ասեց.—Ջանը՜մ, դու փորձանք ի՞ս, քշե, էրթանք։

Քշեց, տեսավ շալկվորեմ՝ հ՝ըռաստ էկավ։

Ասեց.—Էդ ի՞նչ է քու շալակ։

Ասեց.—Հընդհավու հավկիթ է, փաշի ախչիկն հ՝ուզեր է, կտանիմ փաշի ախչկան։

Ասեց.—Փաշի ախչիկ հանդ է, էկեր իմ, կտանիմ Խութբի թագավորին, դարցի զքու հավկիթ առ ու գնա։

Մարդն ասեց.—Չէղավ, կտանիմ ծախիմ։

Տղեն ասեց.—Մաղամ օր կտանիս քաղաք ծախիս զքու հավկիթներ, գնա, փաշին ասե, Խութբի թագավոր մեկ թաք մարդ էր ճամբի, էկավ առավ զքու ախչիկն ու գնաց։

Հավկիթ ծախողն է, շալկեց զուր կողով ու էկավ քաղաք։ Դեմ գնաց փաշի տուն, զդուռ զարկեց, հ՝էլան դուրս։

Ասին.—Էդա վախտ ի՞նչ կուզիս փաշից, փաշեն քնուկ է։

Ասեց.—Գործ ունեմ հետ։

Չթողին էրթեր մարդ ներս, զինք զարկեց չալափալեն, էկան առան գացին փաշի խեչ։

Ասեց.—Լա՜ռ, ի՞նչ է։

Ասեց.—Ի՞նչ պիտի էղնի, փաշա, քու ախչիկ, հ՝իսնե հնդհավու հավկիթ էր հ՝ուզի, առա կիգենք, ճամփու հետ, հ՝ըռաստ էկան

էրկու ձիավոր, ասին. «Տղա, էդ ի՞նչ է քու շալակ»։ Ասի. «Հավկիթ է, կտանիմ փաշի ախչկանը»։ Ձիավորն ասեց. «Ձփաշի ախչիկ հանդ է, կտանիմ խութբի թագավորին, դարցի զքու հավկթներ առ ու գնա»։ Ասի. «Չէղավ կտանիմ զիմ հավկթներ կծախիմ ուրիշներուն». Ասեց. «Մադամ օր կէրթաս, գնա փաշին ասա, խութբի թագավոր մեկ մարդըմ էր ճամփի, առավ զքու ախչիկ ու գնաց»։

Փաշեն ասեց.—Գիտի, իշեք տեսեք, ախչիկ ուր հ'օդեն չէ։

Իշքին տեսան օր ախչիկ ուր տեխ չէ, ասին՝ օղորթ է։

Թագավոր ասեց.—Հեծե՛ք։

Հեծան ձիավորտանք ու հ'ընկան տղի ու ախչկա հ'ետև, գացին։

Տղեն գնաց հալվորու քոշկի դուռ հ'իջավ։

Ասեց.—Տղա՛, բերի՞ր։

Ասեց.—Վալայի բերի։

Ախչիկ հանին վերին դին, տղեն ու հալվորն մանցին դուռ նստուկ։

Հալվորն զաչք վերցուց վի, տեսավ օր հ'էրկինք ու գետին սևցեր ին ու կիգան։

Ասեց.—Տղա՛, դու զէդ ախչիկ օր բերիր, մարդ կռայի՞ց։

Տղեն ասեց.—Արո՛, վալա՛յի բերելու վախտ մարդ չկռայից, բըլե ճամփու հետ, շալկվորըմ էկավ, ասի. «Տղա, քու շալակ ի՞նչ է»։ Ասեց՝ «Հավկիթ է, կտանիմ փաշի ախչկանը»։ Ասի՝ «Ձփաշի ախչիկ հանդե փախցուցի, կտանիմ խութբի թագավորին, դարցու զքու հավկթներ առ ու գնա»։ Մարդն ասեց. «Չէղավ, կտանիմ քաղաք, կծախիմ»։ Ձըմ գինա ինք է գացի խաբար տվի։

— Շա՛տ աղեկ,—ասեց հալվորն,—օր էկան, իմա՞լ կէնիս։

Ասեց.—Ջանը՛մ, աստված օղորմած է, գու քու տեխ ծանտր նստի։

Քաշեց զձին դուրս, հեծավ, զթուր հանեց ու հ'ընկավ էդ փաշի ասքըրի մեջ, գլխեն շարդեց, հ'իջավ տակ, տրկեն շարդեց հ'էլավ գլուխ։ Նը՛ տղի ձիուն ձի կհասնի, նը՛ տղի թրին՝ թուր։ Հար հ'իրկուն կկռվեր, հ'իրկուն գիկեր հալվորու դռան շեմքի վրեն կդներ ուր գլուխ ու պառկեր քներ։ Ասքյար լէ դաշտն էր ղարկե չաղըր։

Էդոնք թըղ մնան էդ տեխ, մենք դառնանք խութբի թագավորի վրեն։

Խութբի թագավոր կես գիշեր քնուկ էր, հ'էրզի մեջ տեսավ օր

ուրեն ձեռքըմ հալավ բերին հագուցին, խրոդավ։ Հ'իմցավ, տեսավ օր քրտինքըմ օտներուց հաբ գլուխ տվեր է վրեն։

Ասեց.—Վալա՛յի, կա ու չկա Կյանճ օղլան բռվեր է կովի, նեղության մեջ է։

Բոռաց, ինչխըդար ձիավոր օր կեն, հեծան էկան դուռ կանան, հագավ զուր հալավ, հ'էլավ, Քիշնարն քաշեց դուրս ու հեծավ։

Հեծավ ու զձիավորդանք էձգեց հ'ետև, հըմա գիշերանց քշեց ու գնաց։

Աղոթրան բացվավ-չբացվավ, հ'եռանց տեսավ, օր Կյանճ օղլան քաշեր է զուր թուր ու հ'ընկեր էդ Տիարբաքրու փաշի ասքըրի մեջ, կէլնի գլուխ, կիշնի տակ։

Խութբի թագավորն զձիու գլուխ վերուց, ասեց.—Գիտի Քիշնար, քու օր հ'էս օր է։ Ձիավորդաննուն ասեց՝ ես կէրթամ, դուք էկեք։

Հասան, օր մտավ օրտվի մեջ, ասեց.—Կյա՛նճ օղլան, մը՛ վախենա, ես էկա։

Հ'ընկավ օրտվի մեջ, ինչխըդար ինք ջարդեց, էն խդար լէ ուր ձին, հ'իրկուն էղավ, Տիարբաքրու փաշի ասքյար, ինչ օր ջարդվեր էր, ջարդվի, մնացածը վերցին զուրանց չադըրներ ու դարձան հետ։

Խութբի թագավորն վերուց զԿյանճ օղլան, զախչիկը, շնորհակալ էղավ. հալվորուց, առավ զուր ձիավորներն ու դարձան էկան ուր տուն։

Օր էկան հ'իջան, թափան բետ-բետ մարդիկ էկան շնորհավորեցին։

Ասին.—Խութբի թագավոր, ի՞նչ կասիս։ Զհարսնեք չբռնե՞ք։

Ասեց.—Զէ՛, դրա ընծիկ մուրատ կա հետ։

Ասին.—Ի՞նչ է քու մուրատ։

Խութբի թագավորն ասեց.—Զէ՛, հ'առջին հեղ ասի, քանի՞ հեղ կասին, ըստհաղ զՀալպու շահու ձին կուղիմ։

Օլոր օր սապախտան հ'էլավ, քաշեց զՔիշնար դուրս ու հ'էլավ հեծավ։

Ասեց.—Ես օր չբերիմ Հ'ալպու շահի ձին, մարդ չկառնա բերե։

Բարեմնաց էղավ ու հ'ընկավ ճամփեն։

Շատ գնաց, քիչ գնաց, մեկ աստված մենակ գինա։ Գնաց շահի հ'էրկիրն օր հասավ, մարգում՝ հ'ըռաստ էկավ, հանեց քանիմ՝ փարա դրեց ձեռք։

Ասեց.—Ախպե՛ր, ախպեր Հալպու շահն զուր ձիանք հ՝ո՞ւր կկապե։

Ասեց.—Էնդոր խաս թավլա կա, հանդե տան մոտ էրկու խարախոլ կանուկ, էնդոր խաս թավլի դուռ։

— Պա,—ասեց,—շահի Դո՞ռի ձին հ՝ուր է։

Մարդն ասեց.—Էնդոր թավլեն լէ ուրիշ է, խարախոլրմ լէ էնդոր դուռն է կանուկ։

Հ՝իրկուն օր եղավ, հեծավ զուր ձին ու քշեց գնաց, էդ Դորի ձիու թավլի դուռ կանավ։

Ասեց.—Շահի ձիանք հ՝ո՞ւր է, ես ուխտ իմ էրի, իմ հ՝էրկրեն էկեր իմ, օր թամաշա էնիմ, էրթամ։

Խարախոլն ասեց.—Անկարելի է։

Ասեց.—Մեղք եք, ըռզայով թողեք էրթամ ներս։

Չթողին, քաշեց զթուր զգլուխ թոցուց։ Գնաց ներս, տեսավ օր խարախոլրմ լէ Դորի ձիու հ՝առեշ կանուկ է։

Օր մոտեցավ ձիուն, ասեց.—Մի մոտենար հըմկա խուրդուշուն գիկա, քու հոգին դարբի՞ն է շինի, շահու ձիուն կմոտենաս։

Օր հըմալ մեծ-մեծ խոսաց, թուրըմ լէ ընդոր զգլուխ թոցուց, քաշեց ղԴորին դուրս, հեծավ զՔիշնար, Դորին լէ հետևեն-հ՝ետավ քաշեց, առավ ու էկավ։

Էնի ուր հ՝իգալու հետ թըղ էղնի, մենք դառնանք վըր շահին։ Նորաթճեք կէրթան օր նորաթ փոխին, կէրթան տեսնան օր խարախոլներու գլուխ իրեք լէ կտրուկ է, թալուկ էն տեխ ու Դորի ձի չկա։

Ճուհապ գնաց շահին.—Ջասի՞ս՝ էկեր ին զխարախոլներ սպաներ ին, առած ին զԴորի ձին գացած։

Շահն ասքյար ճամփըցուց. հ՝ո՞ւր պիտի էրթան փնտրին, գացին օլըրգան, դարձան էկան ասին՝ չգտանք։

Խութբի թագավոր առավ ղշահի ձին ու էկավ։ Հ՝էրկիր հ՝էրկըրով թափավ էկավ աչքըլուսին։

Ասին.—Խութբի թագավոր, էլ ի՞նչ կասիս, զքու հարսնեք չբռնե՞ք։

Խութբի թագավորն ասեց.—Դրռ բանըմ լէ կա։ Զուր Հընդու թագավորի տղեն լէ չբերիմ, հարսնեք չպիտի բռնիմ։

Հալվորն ասեց.—Հար հ՝էսօր դու ինչ օր էրիր, թալիր բռնեցիր ես չխոսացի, հըմկա դոր իմն է։ Ջէտ տղեն ես պիտի էրթամ բերիմ։

Խութբի թագավորն ու հ'էրկրացին ասին.—Անկարելի՛ է, դու հալվորցեր իս, հ'ո՞ւր կէրթաս, հ'էսօր քու վա՞խտն է նոր դուրս հ'էլնես։

Ինչ էրին, չկառցան վրեն։ Հ'էլավ սապախտան, Մուխքիամ ձիմ' առավ հեծավ, չանթեմ' լէ էձգեց վիզ, փրոթուկ գիրքըմ լէ դրեց չանթեն ու քշեց գնաց։

Քշեց գնաց Բուխարի հ'էրկիր կասեն.—Էդ Հրնդու Մաչինու թագավորի տղին։ Գնաց էդոր հ'էրկիր, հ'էլավ դուրս ու պառվում' տուն։ Տղի տան դեմ մրսաֆըր էղավ։ Հակուրեմ լէ օսկի էր տարի ուր հետ։ Օր հ'իջավ ձիուց, հանեց հինգ օսկին ճըխտեց պառվու ձեռք, ասեց.—Էդա հինգ օսկին քղիկ, կտանիս մասրաֆ կէնիս ընծիկ։

Պառավն օր զհինգ օսկին տեսավ, էղավ աշխըրքով, գնաց առավ միս, բերեց էփեց զատ, կերան։

Հ'իրկուն օր էղավ, հալվորն պառվուն ասեց.—Ջրս կառնա՞ զէդա թագավորի տղեն բերի էդա տեխ, ասի.— Մըր տուն հալվորըմ էկի, թուղթ կէնե, հըմալ սարսափելի բան չէղեր է։ Մարդու էղնելու օր, մեռնելու օր, ի՞նչ գիկա մարդու գլուխ, ի՞նչ չի դա, որ ախչիկ զվո՞ր տղեն կառնե՝ գինա։

Տղեն զէդ օր լսեց, գըռսըվավ ու հ'էլավ դուրս, էկավ պառվու տուն, տեսավ օր հալվորըմ էդ տեխ նստուկ է.—Բարև քղիկ, հալվո՛ր։

— Աստծու բարին երիտասարդ։

— Հալվո՛ր, քու բախտն իմ հ'ընկի, ես լսեր իմ թուղթ կիշքիս, դու ընծիկ թուղթըմ իշքե, ի՞նչ օր կուզիս՝ քղիկ կիտամ, մենակ մարդ չկոայե։

Հալվորն հանեց զուր փրոթուկ, իշքեց վրեն ու զգլուխ տարավ բերեց։

Ասեց.—Քու թուղթ հոդա չիշքվի, քու թուղթ պետք է հըմալ տեխ իշքեմ օր ճետու ձեն չի դա, օր հ'իգա, թըլիսմ խարաբ կէղնի։

Աֆանդըմ տղեն ասեց,—Կուզիս, հ'էլնեք էրթաք սար, հըմալ տեխըմ օր ճետու ձեն մըր անկաշ չընկնի։

Հալվորն ասեց.—Դու դինաս, օր հազ կէնիս, ես լէ գիկամ։ Հ'էլավ առավ զտղեն ու էկավ։

Էկան դուրան դաշտիմ' մեջ, բացեց զուր փրոթուկն, իշքեց։

Ասեց.—Տղա լա՛ռ, քու աստղ կցուցու՝ դու պետք է էրթաս

Խութբի թագավորին էղնիս չբրուխճի, էնդոր, ձեռքով կկարգվիս. քու սրտի սիրածն որն օր էղնի, զէնի կառնիս։

Տղեն զգլուխ տարավ բերեց, ասեց.—Ջանը՛մ, ի՞նչ է կասիս, ես ի՞նչ գինամ Խութբի թագավոր դոր է, մինակ զուր անուն իմ լսի։

Հալվորն մեկ լէ կիշքե, զուր փրոբթուկ, կասե.—Լաո՛, քու աստղ հրմալ կցուցու, դու պետք է Խութբի թագավորին չբուխճի էղնիս, էնդոր ձեռքով կարգվիս ու զքու սրտի սիրածն առնիս։

Տղեն ասեց.—Ջանը՛մ, ես Խութբի թագավորի հ'էրկիր ի՞նչ գինամ դոր է։

Հալվորն ասեց.—Օր գինաս, կէրթա՞ս։

Տղեն ասեց.—Իմա՞լ էնիմ, էն օր իմ աստղ էնտեխ կցուցու, ջանդարդի պիտի էղնիմ, էրթամ։

Հալվորն ասեց.—Օր կէրթաս, ես Խութբի թագավորի թուղթ իշողն իմ, էկիր իմ օր զքզիկ առնեմ էրթամ։ Գիկա՞ս, քելե էրթանք։

Տղեն է, հ'ընկավ հալևորու հ'առջև էկավ, թե հինգ, թե վեց ավուր մեջ, էկան Խութբի թագավորի հ'էրկիր հ'էլան դուրս։

Ձեն գնաց Խութբի թագավորին.—Ջասի՞ս՝ ըպա հ'ալվորն առավ Հընդու թագավորի տղեն ու էկավ։

Խութբի թագավորն հ'էլավ ուր ձիավորներով, էկավ տղի հ'առջ, տարավ հ'իջուց։

Տղա մ'ասի, ուր աչք ու ունք, դիներ խալմով են քաջած։ Իմալ օր ուր աչք ու ունքն էր, հրմալ լէ ուր խելքն էր, էղոր հ'ապով Խութբի թագավոր մարախ էր էրի։

Հալվորն օր զՀընդու Մաչինու թագավորի ախչիկ լէ բերեց, հ'երկրացին քոմավ էկավ Խութբի թագավորի մոտ։

Ասեց.—Ի՞նչ կասիս, իրեք մուրազ լէ կեր քու սրտի մեջ կատարվավ։ ՁՏիարբաքրու փաչի ախչիկն է բերիր, Հալպու շահի ձին էր բերիր, Հընդու Յամանու թագավորի տղեն էր բերիր, ամր էրե զքու հարսնեք բռնեք, բալքիմ տղեմ՝ էղնի էդա կնկաց զքզիկ, հ'ետև քու հ'ընցման նստի վըր քու թախտին, թագավորութեն էնե մզիկ։

Խութբի թագավորն ասեց.—Իմ սրտի մարամ կատարվավ, մնաց ձըր սրտի մարամ, հայդե՛, հրաման է ձզիկ, հարսնեք բրոնենք։

Հարսնից թագարուկ տեսան, զհարսնեք բռնին, յոթն օր, յոթն գիշեր դոլ ու զուռնեն զարկեց։ Էնդոնք հասան ուրանց մուրազին,

դուք լէ հասնեք ձրր մուրազին։

Օր կարգվավ, խըլըսավ, խորոտիկ ախչիկըմ լէ գտավ Հընդու Յամանու տղի վրեն պսակեց, տունըմ տվեց, ասեց.—Գացեք, ձզիկ ապրեք։

Աստծուց հ'իշավ իրեք խնձոր. մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ լէ՝ անկաճ էնողին։